Հավելված 1

18.09.2024թ.-ի թիվ 52-Լ Տնօրինության որոշմամբ

Ուժի մեջ է 19.09.2024թ.-ից

Բանկի քարտապան Հաճախորդներին տրամադրվող վարկային պրոդուկտների նկարագրություն

ՀՀ	Պրոդուկտի անվանում	Քարտի տեսակ	Առավելագույն սահմանաչափ	Ժամկետ	Մարման նկարագրություն և առանձնահատկությունները	Սակագին /տոկոսադրույք
1	Վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC WE MC Business MC Business preferred	Maximum 10,000,000 ՀՀ դրամ, 20,000-ական Եվրո / ԱՄՆ դոլար	1-3 տարի	Մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը վարկառուն պարտավոր է մարել վարկի օգտագործված գումարի առնվազն 10-20 տոկոսը և մարման օրվա դրությամբ վարկի օգտագործված գումարի դիմաց հաշվարկված տոկոսներն ամբողջությամբ: Մայր գումարի ամբողջական մարումը կատարվում է պայմանագրի ժամկետի վերջում:	Կանխիկացման միջնորդավճար 0.5%-0.7% Մինչև 18%
2	Նվազող սահմանաչափով վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC WE MC Business MC Business preferred	Maximum 10,000,000 ՀՀ դրամ, 20,000-ական Եվրո / ԱՄՆ դոլար	1-3 տարի	Մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը վարկառուն պարտավոր է ամբողջությամբ մարել վարկի օգտագործված գումարի դիմաց մինչ այդ օրը հաշվարկված տոկոսները: Պայմանագրի գործողության վերջին ամիսներին՝ առնվազն 5 կամ հաճախորդի հայտում նշված քանակով, բայց ոչ պակաս քան 5 ամիս, Բանկը յուրաքանչյուր ամիս իրականացնում է վարկի առավելագույն սահմանաչափի նվազեցում՝ սահմանաչափի գումարի համապատասխան տոկոսի/մասի չափով: Նվազեցումը կատարվում է քարտին դրամական միջոցների մուտքագրման օրը: Սահմանաչափի նվազեցվումը կատարվում է նաև վարկի չօգտագործված մասի չափով:	Կանխիկացման միջնորդավճար 0.5%-0.7% Մինչև 18%
3	Արտոնյալ ժամանակահատվածով վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC WE MC Business MC Business preferred	Maximum 10,000,000 ՀՀ դրամ, 20,000-ական Եվրո / ԱՄՆ դոլար	1-3 տարի	Եթե մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) վարկառուն մարում է օգտագործված վարկային գծի գումարն ամբողջությամբ, ապա Բանկն օգտագործված գումարի դիմաց տոկոսներ չի հաշվարկում: Եթե Վարկառուն նշված ժամանակահատվածում մարում չի կատարում կամ մարում է օգտագործված վարկային գծի գումարն ոչ ամբողջությամբ, ապա Վարկատուն հաշվարկում է տոկոսներ օգտագործված գումարի դիմաց՝սկսած Բանկի Գործառնական օր համակարգում օգտագործված գումարի ձևակերպման օրվանից մինչև պարտավորության ամբողջական կատարումը:	Կանխիկացման միջնորդավճար 0.9%-1% Մինչև 18%
4	Պարտադիր մարումով արտոնյալ	MC Standard MC Gold	Maximum 10,000,000 ՀՀ	1-3 տարի	Եթե մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) վարկառուն մարում է օգտագործված վարկային գծի գումարն ամբողջությամբ, ապա Բանկն	Կանխիկացման միջնորդավճար

	ժամանակահատվածով վերականգնվող քարտային վարկային գիծ	MC WE MC Business MC Business preferred	դրամ, 20,000-ական Եվրո / ԱՄՆ դոլար		օգտագործված գումարի դիմաց տոկոսներ չի հաշվարկում: Վարկառուն պարտավոր է մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) մարել օգտագործված վարկային գծի գումարի առնվազն 10%-ը: Եթե Վարկառուն նշված ժամանակահատվածում մարում չի կատարում կամ մարում է օգտագործված վարկային գծի գումարն ոչ ամբողջությամբ, ապա Վարկատուն հաշվարկում է տոկոսներ օգտագործված գումարի դիմաց՝սկսած Բանկի Գործառնական օր համակարգում օգտագործված գումարի ձևակերպման օրվանից մինչև պարտավորության ամբողջական կատարումը:	0.9%-1% Մինչև 18%
5	Անկանխիկ գործարքների արտոնյալ ժամանակահատվածով քարտային վարկային գիծ	MC Standard MC Gold MC WE MC Business MC Business preferred	Maximum 10,000,000 ՀՀ դրամ, 20,000-ական Եվրո / ԱՄՆ դոլար	1-3 տարի	Մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ)Վարկառուն պարտավոր է մարել վարկի կանխիկ (կանխիկ են համարվում՝ կանխիկացում բանկոմատից, Cash տերմինալից, Wallet-ով փոխանցումները և քարտային հաշվից փոխանցումները) եղանակով օգտագործված գումարի առնվազն 10 (տասը) տոկոսը և մարման օրվա դրությամբ վարկի կանխիկ եղանակով օգտագործված գումարի դիմաց հաշվարկված տոկոսներն ամբողջությամբ: Եթե մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) Վարկառուն մարում է անկանխիկ եղանակով օգտագործված վարկային գծի գումարն ամբողջությամբ, ապա Վարկառուն անկանխիկ (անկանխիկ են համարվում՝ վճարումներ առևտրի և սպասարկման կետերում, ինտերնետային գործարքներ և կոմունալ վճարումներ) եղանակով օգտագործված գումարի դիմաց տոկոսներ չի հաշվարկում: Եթե Վարկառուն նշված ժամանակահատվածում մարում չի կատարում կամ մարում է անկանխիկ եղանակով օգտագործված վարկային գծի գումարը ոչ ամբողջությամբ, ապա անկանխիկ եղանակով օգտագործ-ված գումարի նկատմամբ հաշվարկում են տոկոսներ՝ սկսած Վարկատուի Գործառնական օր համակարգում անկանխիկ եղանակով օգտագործված գումարի ձևակերպման օրվանից մինչև պարտավորության ամբողջական կատարման օրը:	Կանխիկացման միջնորդավճար 0.5%-0.7% Մինչև 18%
6	Չվերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard	Համաձայն Բանկի իրավասու մարմնի որոշման	Համաձայն Բանկի իրավասու մարմնի	• Անուիտետային • Մայր գումարի հավասարաչափ մարման ձև • Մայր գումարի մարումը ժամկետի վերջում	Համաձայն Բանկի իրավասու մարմնի որոշման
7	Գործող հաճախորդների աշխատակիցների համար ընկերության երաշխավորությամբ	MC Standard MC Gold MC WE	Համաձայն Բանկի իրավասու մարմնի	Համաձայն Բանկի իրավասու մարմնի	Մինչև անվանական աշխատավարձի կրկնապատիկի չափով, մինչև 5 մլն ՀՀ դրամ, համապատասխան վարկային գծի համար նախատեսված պայմաններ (ներկայացված է 2-րդ կետում)	Համաձայն Բանկի իրավասու մարմնի որոշման

	նվազող սահմանաչափով քարտային ՎՎԳ		որոշման			
8	Ավանդի գրավով վերականգնվող կամ նվազող սահմանաչափով կամ պարտադիր մարումով արտոնյալ քարտային ՎՎԳ տրամադրում (գրավատուն և վարկառուն կարող են տարբերվել)	MC Standard MC Gold MC WE MC Business MC Business preferred	Համաձայն Բանկի իրավասու մարմնի որոշման	Համաձայն Բանկի իրավասու մարմնի	Համապատասխան վարկային գծի համար նախատեսված պայմաններ (ներկայավցված են 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում)	Համաձայն Բանկի իրավասու մարմնի որոշման
9	Գլխավոր վարկային պայմանագրի ազատ մասի սահմաններում վերականգնվող կամ նվազող սահմանաչափով կամ պարտադիր մարումով արտոնյալ քարտային ՎՎԳ տրամադրում	MC Standard MC Gold MC WE MC Business MC Business preferred	Համաձայն Բանկի իրավասու մարմնի որոշման	Համաձայն Բանկի իրավասու մարմնի	Համապատասխան վարկային գծի համար նախատեսված պայմաններ (ներկայավցված են 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում)	Համաձայն Բանկի իրավասու մարմնի որոշման

Պարզաբանումներ՝

- Բանկի աշխատակիցների վարկային քարտային գծերը տրամադրվում են Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգի համաձայն:
- Սույն պայմանները կիրառվում են առանց ապահովության քարտային վարկային գծերի տրամադրման ժամանակ (բացառությամբ սույն հավելվածի 7-րդ կետի վարկատեսակի), այլ դեպքերում պայմանները սահմանվում են Բանկի այլ իրավական ակտերի համաձայն:
- 4-րդ տեսակի գծի դեպքում վարկային գծի գումարի օգտագործված առնվազն 10%-ը չմարելու դեպքում ժամկետանց է դառնում նշած 10%-ը կամ դրա չմարված մասը, ինչպես նաև կուտակված տոկոսագումարը, որը ձևակերպվում է որպես ժամկետանց պարտավորություն:
- Ռեզիդենտ անձանց կարող են տրամադրվել բացառապես ՀՀ դրամով ՔՎԳ-ներ, իսկ ոչ ռեզիդենտներին ՔՎԳ-ները կարող են տրամադրվել նաև արտարժույթով: